



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Արովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. huugt.abovyan.kotayq@mta.gov.am

17-ը նոյեմբերի 2022թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Ուսանողության միջազգային օրվա՝ նոյեմբերի 17-ի կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ Հայաստանի և արտերկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող մեր բոլոր հայրենակիցներին: Մեր երկրի ապագան և առաջընթացը մեծապես կապված են ուսանողության հետ. այսօրվա ուսանողները մեր վաղվա օրվա մասնագետներն են տարբեր բնագավառներում, ուստի բանիմաց մասնագետներ ունենալու համար մեր բուհերում պետք է մատուցվեն կրթական որակյալ ծառայություններ:

Մեր երկիրը պետք է ունենա կիրթ և զարգացած հասարակություն, որն իր ողջ ներուժը կգործադրի հայրենիքի հզորացմանը: Վստահ եմ, որ Հայաստանի Հանրապետությունը գիտելիքն ու կրթությունը կարևորող պետություն է և կանի հնարավոր ամեն բան հայ ուսանողների համար կրթական ժամանակակից պահանջներին համապատասխան և անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով հագեցած բուհական կրթություն ապահովելու համար: Հարգելի՛ ուսանողներ.

Ուսանողության միջազգային օրվա առթիվ մաղթում եմ լինեք հաջողակ, նպատակասլաց և գրանցեք ձեռքբերումներ բարձրագույն կրթության բնագավառում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ